Սղագրություն

Փիէռ Աքքելյանի բացման խօսքը

Հայ Ոսկերիչներու Միության Հիմնադիր Համագումարին

Երեւան, Մեպտեմբեր 1997թ.

Նորին վսեմություն Գառնիկ Նանագուլյան,
Հարգելի հյուրեր եւ սիրելի բարեկամներ,

Պիտի փորձեմ խոսիլ Մայրենի լեզվով: Եթե Մասրոպ Մաշտոց տեսներ թե ինչպես չարագործել եմ Այբուբենը վստահ եմ որ այն պիտի չստեղծեր:

Ինձ համար այսօրվա հավաքույթը իրականացումն է երազի մը: Մոտ երկու տարիներ առաջ ներկա կգտնվեի հարսանիքին Ճափոնի ոսկերչական ընկերակցության նախագահի աղջկան: Հոն էր եւս իմ շատ սիրելի հայ բարեկամս, որ ինքը պատճառն էր իմ հոն ըլլալուս քանի որ ինքը զիս ծանոթացուցած էր այդ մարդկանց որոնց հետ առեւտուր կնեմ մոտ չորս տարիներէ ի վեր: Կուզեմ Ձեզ հայտնել որ մարգարիտի գործեն զատ մեր հաստատությունը Կանադայում կարտադրէ ձեռքով շինված բարձրագույն որակի ամուսնական մատանիներ որը մենք կծախենք աշխարհի ամեն կողմ մեր լավագույն շուկան ըլլալով Ճափոնը մեր այս հարսնեվորներու ընկերության միջոցավ: Նույն այս Ճափոնական հաստատությունը ունի մոտ 350 աշխատավորներ եւ մեծաքանակի գործ կնե բոլոր Ճափոնի տարածքին ըլլալով հինգերորդ լավագույն ոսկերչական հաստատությունը:

Ճափոնի հեռու ափերուն իմ հայ բարեկամիս հետ մենք մշակեցինք այսօրվան հանդիպումի գաղափառը որը շատ պարզ է: Եթե իր միջամտությամբ ես այս տարի մոտ երկու միլիոն դոլարի գործ եմ արել այդ ճափոնացիներուն հետ, երեվակայեցեք ինչ է կարելի եթե համայն աշխարհի հայ ոսկերիչները նույն ձեվով իրար օգնեն արդեոք ինչեր կարելի չե ընել: Կուզեմ այստեղ նորեն շնորհակալություն հայտնել իմ գաղափառակից բարեկամին: Առանց իր համոզչական աշխատանքին, որ ես

անպայման գամ Հայաստան, կրնաք վստահ ըլլալ որ այսօր հոս պիտի չըլլայինք: Ձեզմե շատերու ծանօթ է այն՝ տիպար հայորդի Վարդգես Քնաճյանը. Շնորհակալ եմ քեզ:

Գաղափառ ունենալը մեկ բան իրագործելը բոլորովին ուրիշ:

Երախտապարտ ենք եւս մեր շատ աշխույժ նախարարին, որ իր Մոնթրեալ ժամանումին հանդիպեցանք եւ իր քաջալերումով եւ աշխատանքով, իր աջակիցներուն Հրաչ Գասպարի եւ Գագիկ Եղիազարյանի հետ վերջին երկու ամիսներու ընթացքին մեջտեղ բերինք այս հավաքույթը:

Նույնքան երախտապարտ ենք մեր պատվո նախագահին պարոն Հայկ Արսլանյանին, որ ջանք չխնայեց իր ուժերով թիկունք կանքնելու եւ իրականացնելու մեր երազը: Գալ տարի նորեն հանդիպինք հոս ավելի շատ մեծ թիվով:

Շնորհակալ ենք Ձեր մասնակցության եւ ուշադրութեան համար:

Մերսի: